Նման պայմաններում և հաշվի առնելով այն հանգամանքը, որը հայցապահանջը բավարարվում է, Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 100000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

<<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում <<Երևանի պետական համալսարան հիմնադրամի>> 2023թ փետրվարի 02-ի <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում <<Երևանի պետական համալսարան հիմնադրամի>> 2023թ փետրվարի 02-ի <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

<<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամից հօգուտ <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի բռնագանձել՝ 50000 ՀՀ դրամ, որպես վճարված պետական տուրքի գումար:

<<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամից հօգուտ <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի բռնագանձել՝ 100000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

<<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի միջնորդությունը՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին, մերժել:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո տասնհիգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ